

ՆԱՐԵԿ
ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՈՅ

Բան ԶԵ.

Ա.— Որովհետեւ մեր գուարթ արթնութիւնը Քեզի համար քուն մըն է, իսկ ուղիղ հաւատքով խոր թմրութեան մէջ լռելինս՝ աչքերու անթարթափ բացութիւն, ուստի հոգիիդ իմաստութիւնովը ուղղէ՛ մեր ձեռքի գործին յաջողութիւնը, լսելով աղօթքիս այս հեծումները: Զօրացո՛ւր զիս, Տէր, երբ տաժանելի եւ ծանր գործի ձեռնարկեմ. օգնէ՛ իմ տկարութեանս. թեթեւ ըրէ՛ աշխատութեանս սկիզբը. արագացո՛ւր, Ամենակարող, առաջադրած ձեռնարկութիւնս, դիւրինցո՛ւր անոր աւարտումը. բերկրութեամբ հասցո՛ւր զիս գործին վախճանին. ժմնեցո՛ւր զիս անկէց յուսացած արդիւնքիս. հետս եղի՛ր ամբողջ ճամբուն երկայնքը. բարձրացումի թռիչքիս մէջ՝ օգտակարին կողմը փութացո՛ւր զիս. վտագին ծանրութեան ատենը աջակողմս եղի՛ր. անձկութեան պահուն լսեցո՛ւր ձայնդ. կորուստի ժամուն՝ ձեռքովդ ապրեցո՛ւր. դժուարութեան պարագային՝ մատովդ զգացո՛ւր. հարթէ՛ վնասակար խափանումին արգելքը. հրեշտակի ձեռքով ինչպէս Անբակումին, ճար մը ըրէ՛ ինծի. խօսք շնորհէ՛ ինծի՝ բազմութեան առջեւ. իմաստութիւն տնկէ՛ իմ մէջս՝ չարն ու բարին քննած ատենս. կամքիդ ամպովը հրաշապէս հովանաւորէ զիս. կենաց փայտովդ հանդարտեցո՛ւր ծովուս մրրիկը. Քու հրամանովդ սանձէ՛ աստեւոր կեանքի այդ պատկերը. վասնզի եթէ ողորմութիւնդ ուզէ, ո՛վ Տէր, վեմէն աւելի կարծր կըլլան ծովուն լոյծ կոհակները. իսկ եթէ ցամաքի վրայ չհոգաս զիս, կռուանին պնդութիւնը՝ անկայուն բանի մը պէս ներքեւէս կը սահի կանցնի:

Բ.— Արդ, հաճութեամբ ընդունէ, ո՛վ Յիսուս, այս պաղատանքի խօսքերս, ու երկիւղալի կասկածը վստահութեան փոխէ՛: Ինչպէս որ ջրհեղեղի այն ամենակործման դարուն, գետնի հարթ տարածութեան վրայ անվախ ու անհոգ ապրողները ողորմութենէդ զրկուելնուն համար կորսութեան, իսկ մշտաշարժ հիմի վրայ կառուցուած լաստին մէջ եղողները, Գթածին անուան ապաւինած ըլլալուն՝ պահպանուեցան, կաղաչեմ որ այս վերջիններուն հետ մարդասիրապէս ապրեցնելով խաղաղութեան նաւահանգիստը հասցնես մշտատատան աղօթաւորս ալ. որպէսզի Քու ինծի պարգեւած հոգեւոր շնորհներէն բաժին մը մատուցանելով Քեզի, մարմինիս մեղքերով վայրահակ այս ծանրութիւնը թողում, Տէ՛ր, եւ անբաժանելի կերպով գամ Քեզի միանալ, ո՛վ ամէն բանի մէջ օրհնել: Ու ամենամաքուր հոգեղէնները միանալով հողեղէն մարտիրոսներուն հետ, որոնք ջուրով եւ հուրով փորձուեցան, եւ իրենց մահուան վայրկեանին մեզի համար աղօթեցին եւ մեզի օգնութեան յիշատակ մը թողուցին, միաձայն կցորդութեամբ պիտի ըսեն մեզի հետ, եղիցի, եղիցի: